Արձանագրություն N 2

<< ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/3>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 29 հոկտեմբերի, 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ Հ. Հայրապետյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ Ա. Ֆեդոսեև

/ԳՊ/ ԳԱ /՝ Ն. Պետրոսյան

/ԳՊ/ԲԱ/՝ Է. Գրիգորյան

/ԳՊ/ԲԱ/՝ Ռ. Աջամօղլյան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ Վ. Ղազարյան

1. <<**ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/3**>> ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2021թ.-ի հոկտեմբերի 29-ին, ժամը 11:00-ին:

2. Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	<<Բարսիս>> ՍՊԸ	Ք.Երևան, Արշակունյաց 57/2, հեռ. (011) 777000

3. Հայտերի բացման արդյունքում արձանագրվեց, որ ընթացակարգի մասնակցի կողմից ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, և ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը: <<Բարսիս>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

4. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

5. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

6. Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	*Գնման առարկայի անվանումը*	*Չափման միավորը*	*Քանակը*	**Գնման առարկայի գնման հայտով հաստատված գինը**	*Մասնակցի անվանումը և առաջարկված ընդհանուր գինը **	
					<<Բարսիս>> ՍՊԸ	
					Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ
1	Գազով աշխատող սարքերի տեղադրման աշխատանքներ	դրամ	1	4636940	2058705	2470446

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

7. <<**ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/3**>> ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և հրավերի 7.7 կետը, հանձնաժողովը որոշեց կազմակերպել միաժամանակյա բանակցություններ ներկայացված գների նվազեցման նպատակով, որը տեղի կունենա 05.11.2021թ. ժամը 11:00-ին, Կառավարական տուն 3, 613 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/3>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

05 նոյեմբերի, 2021թ.
Ժամը՝ 11:00

8. 2021թ. նոյեմբերի 5-ին ժամը 11:00-ին ՀՀ Կառավարական տուն 3 հասցեում, N 613 աշխատասենյակում կազմակերպվել են միաժամանակյա բանակցություններ <<**ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/3**>> ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկների նվազեցման նպատակով: Գնային առաջարկ ներկայացրած <<Բարսիս>> ՍՊԸ-ն բանակցություններին չի ներկայացել:

9. Ներկայացված հայտի հիման վրա <<**ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/3**>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց **ընտրված մասնակից ճանաչել** <<Բարսիս>> ՍՊԸ -ին 1-ին չափաբաժնի մասով:

10. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

11. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Հանձնաժողովի
Նախագահ՝

ԳՊ/ԳԱՊ ---------- Հ. Հայրապետյան

Անդամներ՝

ԳՊ/ԳԱ ---------- Ա. Ֆեդոսեև

---------- Ն. Պետրոսյան

ԳՊ/ԲԱ ---------- Է. Գրիգորյան

ԳՊ/ԲԱ ---------- Ռ. Աջամօղլյան

Քարտուղար՝
/ԳՊ/ՄԻՄ/ ---------- Վ. Ղազարյան